**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ**
**«ՀԱՂԹԱՆԱԿ», «ՉԱՐԵՆՑԱՎԱՆ-3» և «ՎԱՆԱՁՈՐ-1» ԵՆԹԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ և ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԷԼԵԿՏԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**
**ՎԱՐԿ** N 8388-AM
**ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
HV-CS-ESRAF-1/2015
**ԾՐԱԳՐԻ հհ**. P116748
**ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ստացել է ֆինանսավորում Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկի կողմից (ՎԶՄԲ) վարկի տեսքով «Էներգամատակարարման Հուսալիության Ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրի դիմաց: Ծրագրի նպատակն է բարձրացնել էներգահամակարգի շահագործման էֆեկտվությունը և հուսալիությունը, ընդլայնել և վերակառուցել «**Հաղթանակ**» ենթակայանը, ինչպես նաև վերակառուցել «**Չարենցավան**-3» և «**Վանաձոր**-1» ենթակայանները: «**Հաղթանակ**» ենթակայանը կարևոր է Երևանի արևմտյան մասի բաշխիչ ենթակայանների և սպառիչների հուսալի էներգամատակարարումը ապահովելու հարցում: «**Չարենցավան**-3» սպասարկում է բնակչությունը և նաև կատարում է այլ վեց ենթակայանների համար փոխանջատման ֆունկցիա Հայաստանի հյուսիս-արևելքում: «**Վանաձոր**-1» ենթակայանը սպասարկում է բնակչությունը և մեծ արտադրական սպառիչներին Հայաստանի հյուսիսում:
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ–ն (ԲԷՑ ՓԲԸ), որպես ծրագիր իրականացնող կազմակերպություն, վերը նշված ենթակայանների վերակառուցման համար պետք է ընտրի նախագծի, մատակարարման և կառուցման կապալառու: Վերը նշված երեք ենթակայանների վերակառուցման աշխատանքների տեխնիկական վերահսկումը իրականացնելու համար ԲԷՑ ՓԲԸ-ն որակյալ միջազգային խորհրդատուի աջակցության կարիք է ունենալու:
Խորհրդատուի կողմից տրամադրված ծառայությունները ներառելու են, բայց չեն սահմանափակվելու հետևյալով՝ ա) նախագծերի դիտարկում, բ) Շինարարության վերահսկում, որակի ապահովում և զննում, գ) աջակցում ԲԷՑ ՓԲԸ-ի նյութերի և սարքավորումների գործարանային փորձարկումների, երաշխիքային թորձարկումների և ենթակայանների շահագործման հանձնման հարցում: Առաջադրանքի տևողությունը գնահատվում է 24 ամիս:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ն սույնով հրավիրում է իրավասու խորհրդատուներին ներկայացնելու ծառայությունների տրամադրման համար հետաքրքրության հայտ: Հետաքրքրված խորհրդատուները պետք է ներկայացնեն համապատասխան որակավորումը հավաստող տեղեկատվությունը (ընկերության

մասին գրքույկներ, Միջազգային ֆինանսական ինստիտուտների (ՄՖԻ) կողմից ֆինանսավորվող ծրագրերի ներքո վերջին 10 տարիների ընթացքում կատարված նմանատիպ աշխատանքների նկարագրությունը, նմանատիպ պայմաններում աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն):

Կարճ ցանկի կազմման չափանիշներն են՝

- Կազմակերպության ընդհանուր փորձը /առավելագույնը 20 միավոր/
- Կազմակերպության փորձը նմանատիպ ծրագրերում, (աջակցություն տեխնիկական վերահսկման և ծրագրի իրականացման գծով ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող ենթակայանների կառուցման և վերակառուցման ծրագրերում) / առավելագույնը 70 միավոր /
- Կազմակերպության տարածաշրջանային փորձը նմանատիպ ծրագրերում, (աջակցություն տեխնիկական վերահսկման և ծրագրի իրականացման գծով ՄՖԻ-ի կողմից ֆինանսավորվող ենթակայանների կառուցման և վերակառուցման ծրագրերում) / առավելագույնը 10 միավոր /

Հետաքրքրված խորհրդատուները պետք է ուշադրություն դարձնեն Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված (2014թ. հուլիսին վերանայված) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցի 1.9 կետին, որտեղ ներկայացված է շահերի բախման վերաբերյալ Համաշխարհային Բանկի քաղաքականությունը:

Խորհրդատուները իրենց որակավորումը բարելավելու նպատակով կարող են միավորվել այլ ընկերությունների հետ Համատեղ Ձեռնարկատիրական Գործունեության կամ ենթախորհրդատվության ձևով:

Խորհրդատուն ընտրվելու է Համաշխարհային Բանկի կողմից 2011թ. հունվարին հրապարակված (2014թ. հուլիսին վերանայված) «Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ՎԶՄԲ վարկերի և ՄԶԸ վարկերի և դրամաշնորհների միջոցներով խորհրդատուների ընտրություն և ներգրավում» ուղեցույցով սահմանված ընթացակարգերի համաձայն: Ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ստորև նշված հասցեով աշխատանքային օրերին ժամը 09.00-17.30: Հետաքրքրության հայտերը պետք է ներկայացնել նշված հասցեով մինչև 2015թ. նոյեմբերի 6-ին, ժամը 11.00:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն ՝ Պարոն Արամ Անանյանին
Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան,Զորավար Անդրանիկի 1,
Հեռ: +37410-720010; ֆաքս: +37410-720121;
էլ.հասցե: hvenprojects@gmail.com; projects@hven.am